

**ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ՀՈՒՈՎԱԿԱՆ
ԶՈՒԳԱՔԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԵՐԱՆՎԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

ՅՈՒ. Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Արևմտահայերենը և արևելահայերենը, լինելով մեկ լեզվի տարբեր դրսևորումներ, էրևան են հանում հնչյունային, բառապաշարային և քերականական որոշակի տարբերություններ: Դրանք առկա են նաև դերանվան հոլովման համակարգում: Այս հարցը այլևայլ հանդիրների առնչությամբ արծարծվել է հին և նոր քերականների աշխատություններում¹: Դակայան առ այսօր այն առանձին և ամբողջական քննության նյութ չի դարձել: Այս հոդվածը, իբրև այդպիսին, առաջին փորձն է:

* * *

Հոլովվող դերանունները երկու գրական հայերեններում հիմնականում նույնն են: Դրանք են. **ես, դու//դուն, մենք, դուք, սա//աս, դա//ատ, նա//ան, արանք//ատոք, դրանք//ատոք, նրանք//անոք, ով, որոք, ինչ, ամեն ինչ, մեկը, ոչ մեկը, ոչինչ, ոչ ոք, ոմանք, որ, ամենքը//ամենը, ինքը//ինք, ողջ, ամբողջ, բոլոր և այլն:** Բայց կան դերանուններ, բայց գործածական են միայն արևմտահայերենում՝ **ինքզինք, իրենք զիրենք, ասիկա, ատիկա, ամիկա,** և դերանուններ, որոնք առավելապես հանդիպում են արևելահայ գրականում՝ **միմյանց, մեկմեկի և ով դերանվան հոգնակին՝ ովքեր:**

Նշված բոլոր դերանուններն էլ արևմտահայերենում, ինչպես արևելահայերենում, ըստ հոլովման բաժանվում են երկու հիմնական խմբի: Մի մասն առանձնանում է հայերենի հոլովվող բոլոր բառախմբերից՝ կազմելով հոլովական ուրույն ձև՝ դերանվանական հոլովում: Այդ դերանուններն են՝ **ես, դուն, ինք, մենք, դուք սա//աս, ասիկա/, դա//ատ, ատիկա/, նա//ան, ամիկա/, ով?** Բացի այդ, արևմտահայերենում **ինք** դերանվան համաբանությամբ դերանվանական հոլովման է ենթարկվում նաև այդ դերանվամբ բաղադրված **ինքզինք** անդրադարձ դերանունը:

Դերանունների մյուս մասը հոլովվում է գոյականների նման՝ **անվանական հոլովմամբ:** Բացի առարկայանիշ (գոյական) դերանուններից (**ինչ, ամեն ինչ, մեկը, ոչ մեկը, ոչինչ, ոմանք, որոնք և այլն**), այս խմբին են պատկանում նաև հատկանիշ ցույց տվող այն դերանունները, որոնք հոլովվում են փոխանվանաբար գործածվելիս՝ **ամեն, ողջ, ամբողջ, իրաքանչիւր, միս, որքան, քանի, մի քանի/մեկ քանի, ինչքան, ուրիշ և այլն:** Առարկայանիշ **ամեն ոք, իրաքանչիւր ոք** դերանունները երկու գրական լեզուներում էլ չեն հոլովվում, քանի որ նրանց վերջին բաղադրիչը՝ **ոք-ը**, չունի անկախ գործածություն: Սակայն **ոչ ոք-ը** հոլովվում է: Նշված դերանուններից **թր-ը** կարող է առարկայանիշ դառնալ և հոլովվել գոյականի նման, իսկ **երբ** դերանունը ունի ժամանակային իմաստ և ժամանակ ցույց տվող գոյականների նման հոլովվում է:

Այսուհանդերձ, երկու խմբի դերանուններն էլ ի հայտ են բերում հոլովական համակարգի, առանձին հոլովների կազմության ու կիրառության տարբերություններ: Այս իմաստով դերանվանական հոլովման ենթարկվող դերանունները առավել ակտիվ դիրքում են. Հոլովական համակարգի տեսակետից դա դրսևորվում է հետևյալ առանձնահատկություններում: Գրական արևմտահայերենում, ի տարբերություն արևելահայերենի, այդ դերանուն-

¹ Տե՛ս օրինակ՝ **Ա. Այտղեան, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1886, Հովհ. Գազանճեան, Նոր քերականութիւն արդի հայերէն լեզուի, Կ. Պոլիս, 1925, Հր. Աճառյան, Լիակատար քերականութիւն հայոց լեզվի, հ. 2, Ե., 1954, Ա. Սարգսյան, Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ, Ե., 1981, Յ. Քիրթճեան, Նոր քերականութիւն հայերէն լեզուի (արևմտահայերէն), Աթենք, 1989 և այլն:**

² **Ասի, ատի, անի** քերականական ձևերը գրական լեզվում հազվադեպ են գործածվում:

ները (ինչպես գոյականները) չունեն ներգոյական հոլով: Դա գալիս է հիմք բարբառից և առհասարակ արևմտախաչ բարբառների, հետևաբար և գրական լեզվի քերականական ստանձնահատկությունն է:

Երկրորդ առանձնահատկությունն այն է, որ արևմտախաչ գրական լեզվում դերանվանական հոլովման ենթարկվող դերանունների (և ոչ միայն այդ դերանունների) տրականն ու հայցականը ձևաբանորեն տարբերակված են՝ ինձի-զիս, քեզի-քեզ, իրեն-զինք, մեզի-մեզ և այլն: Հետևաբար, այդ դերանունների հայցականը առանձնացվում է իբրև անկախ, առանձին հոլով: Կունենանք՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, քացատական և գործիական հոլովները:

Մի առանձնահատկությունն ևս. գրական արևմտախաչերենում սա, դա, նա (սա, առ, սն, սահկա, ստիկա, անիկա) դերանունները, ի տարբերություն արևելահայերենի, ունեն ոչ թե վեց հոլովաձև, այլ ընդամենը չորսը՝ ուղղական, սեռական-տրական, քացատական, գործիական (ուղղական-հայցական և սեռական-տրական հոլովները ձևաբանորեն տարբերակված չեն), իսկ գայս, գայդ, գայն հայցականի ձևերը համապատասխան դերանունների՝ գրաբարի հետևողությամբ կազմված հոլովաձևեր են, որոնցից առաջին երկուսը գրեթե անգործածական են:

Որպես տարբերություն պետք է նշել նաև այն, որ արևմտախաչ գրականում դերանվանական հոլովման ենթարկվող ինքզինք անդրադարձ դերանունը չունի ուղղական հոլով, այսինքն՝ հանդես է գալիս հինգ հոլովաձևով՝ սեռական, տրական, հայցական, քացատական, գործիական:

Հոլովական համակարգի այս տարբերություններից բացի, դերանվանական հոլովման ենթարկվող դերանունները տարբերություններ են ի հայտ բերում նաև ձևավոր հիմքերի կազմության մեջ (ուղղական հոլովը երկու գրական լեզուներում էլ դերանունների ուղիղ ձևն է՝ առանց արմատի կամ հիմքի փոփոխության և զրո վերջավորությամբ):

Սեռական հոլովը երկու գրականներում մասամբ նույնանում է. տարարմատ և նույն բիմբերով են սեռական կազմում ես, մենք, դուք, ինքք/ինք դերանունները՝ համապատասխանաբար ունենալով իմ, մեր, ձեր, իր հոլովաձևերը: Մյուս դերանունների կազմության մեջ նկատվում են որոշ տարբերություններ. դու/դուն դերանունը արդի հայերենի երկու ուստվածներում սեռականը կազմում է տարարմատությամբ, քայց այն արևելահայերենում լինում է գրաբարանն քո, իսկ արևմտախաչերենում՝ քու: Վերջինս հիմք բարբառի ազդեցության արդյունք է: Նույն ազդեցությամբ է պայմանավորված մյուս դերանունների (սա, դա, նա) և դրանց զուգաձևերի սեռականների կազմությունը (սատր, ատոր, անոր)՝ ի տարբերություն արևելահայ սրա, դրա, նրա հոլովաձևերի: Հետաքրքրական տարբերություն է հյևան հանում ով դերանունը. արևմտախաչ գրականում այն չունի ում հոլովաձևը և փոխարինվում է որ դերանվան սեռականաձևով՝ որու: Եվ առհասարակ, ով և որ դերանունների հոլովումը գրական արևմտախաչերենում նույնական է:

Տրական հոլովի կազմության պարագային արևելահայերենի համար գործող սկզբունքը (այն է՝ դերանվանական հոլովման ենթարկվող դերանունները, իբրև կանոն, տրականը կազմում են ուղղականից և սեռականից տարբեր արմատներով) քնորոշ է նաև արևմտախաչերենին, թեև գործում է ոչ նույն հետևողականությամբ: Երկու գրականներում տարարմատության նույն սկզբունքով են տրականը կազմում ես, դու/դուն, մենք, դուք, դերանունները, միայն այն տարբերությամբ, որ արևելահայերենի ինձ, մեզ, քեզ, ձեզ հոլովաձևերին ուսմադիր արևմտախաչ գրականն ունի հիմք բարբառի ազդեցությամբ կազմված ի-ով վերջավորվող ձևերը: Ըստ որում, եզակի առաջին դեմքում այդ ի-ն ավելանում է հնչյունափոխված տարարմատ հիմքին: Այսպիսով ունենում ենք՝ ինձի, մեզի, քեզի, ձեզի հոլովական ձևերը: Ինքք/ինք դերանվան տրականը երկու գրական լեզուներում էլ նույն տարարմատ ձևով է կազմվում՝ իրեն. Ով-ը ինչպես արևելահայերենում, այնպես էլ արևմտախաչերենում, տրականի համար առանձին հոլովաձև չունի:

Սկզբունքը, ըստ էության չի գործում մյուս՝ սա, դա, նա դերանունների պարագային: Եվ եթե արևելահայ գրականում սեռական և տրական հոլովների կազմության մեջ որոշ ձևային տարբերություն այսուհանդերձ նկատվում է, սրա-սրան, դրա-դրան, նրա-նրան, ապա արևմտախաչ գրականում դրանք ուղղակի նույնանում են, ձևաբանորեն տարբերակված չեն՝ սատր-ատոր, ատոր-ատոր, անոր-անոր:

Հայցական հոլովի կազմության մեջ տարբերությունները փոքր-ինչ զգալի են: Եթե հայցականը արևելահայերենում ձևաբանորեն տարբերակված չէ և ըստ էության իբրև առանձին հոլով հանդես չի գալիս, ապա արևմտախաչերենում, ինչպես արդեն նշվել է, այն միանգամայն հստակ ձևավորում ունի: Այս կետում արևմտախաչերենն ավելի ավանդապար է. մենք, դուն, դուք դերանունները հայցականի համար պահպանում են գրաբարի տրականաձև կազմությունները (մեզ, զեզ, ձեզ), իսկ ես և ինք դերանունները՝ գրաբարաձև

հայցականները՝ զիս, զինք³: Այն դերանվանը նույնպես հատուկ է հայցականի գրաբարաձև գործածությունը՝ զայն, բայց առավելապես գրական լեզվում և հավանաբար միտում ունի դուրս գալու գործածությունից, ինչը և փաստորեն կատարվեց զայս, զայդ ձևերի հետ: Հնացած է և անգործածական նաև ով դերանվան գրաբարյան հայցականաձևը՝ զով: Դրան փոխարինում են, ինչպես արդեն ասվել է, որ դերանվան ձևերը:

Դերանվանական հոլովը երկու գրական լեզուներում էլ ըստ էության գործում է միջև հայցական հոլովը, քանի որ բացառական, գործիական (իսկ արևելահայերենում նաև ներգոյական) հոլովները կազմվում են անվանական հոլովման սովորական վերջավորություններով, որոնք երկու գրականներում տարբեր են. արևելահայերենում՝ ից, ով, արևմտահայերենում՝ է, մէ, ով, մով: Երկու տարբերակներում էլ անգործածական է գործիականի ք վերջավորությունը, իսկ արևելահայերենում նաև՝ բացառականի ոց-ը⁴: Ի դեպ, արևմտահայ գրականում դերանվանական հոլովման բացառականը ձևավորելիս առավել կենսունակություն է դրսևորում մէ-ն, իսկ գործիականի դեպքում՝ մով-ը, որոնք համեմատաբար քիչ կենսունակ են անվանական հոլովման մեջ⁵:

Բացի բուն հոլովական վերջավորություններից, բացառական և գործիական հոլովների կազմության մեջ մի տարբերություն ևս նկատելի է: Խոսքը հոլովական հիմքերի մասին է: Եթե արևելահայերենում նշված հոլովները կազմվում են բացառապես տրականի հիմքից, ապա արևմտահայ գրականում ակտիվություն են հանդես բերում նաև ուղղականի և սեռականի հիմքերը: Այսպես, ես, դու, մենք, դուք, ով դերանունների բացառական և գործիական հոլովները արևմտահայ գրականում կազմվում են տրականի հիմքից, ինչպես՝ ինձմէ-ինձմով⁶, քեզմէ-քեզմով, մեզմէ-մեզմով, ձեզմէ-ձեզմով, որմէ-որմով, բայց, ահա, ինք դերանունը կազմվում է ոչ թե տրականի, այլ սեռականի հիմքից՝ իրմէ-իրմով, իսկ ասա, աստ, ան (ասա, դա, նա, ասիկա, ատիկա, անիկա) դերանունները՝ ուղղականի հիմքից՝ ասկէ-ասով, ասկէ-ատով, անկէ-անով:

Այսպիսով, արևելահայ և արևմտահայ գրական լեզուների դերանվանական հոլովման բնդհանուր համադրական պատկերը հետևյալն է.

արևելահայերեն

ուղղ.	ես	դու	մենք	դուք	աս	դա	նա	ով
սեռ.	իմ	քո	մեր	ձեր	սրա	դրա	նրա	ում
տրակ.	ի՞նձ	քեզ	մեզ	ձեզ	սրան	դրան	նրան	—
հայց.	—	—	—	—	—	—	—	—
բաց.	ի՞նձնից	քեզնից	մեզնից	ձեզնից	սրանից	դրանից	նրանից	ումից
գործ.	ի՞նձանից	քեզանից	մեզանից	ձեզանից	սրանով	դրանով	նրանով	ումով
հիմնով	ի՞նձանով	քեզանով	մեզանով	ձեզանով	սրանով	դրանով	նրանով	ումով
հիմնում	ի՞նձնում	քեզնում	մեզնում	ձեզնում	սրանում	դրանում	նրանում	—
հիմնում	ի՞նձանում	քեզանում	մեզանում	ձեզանում	սրանում	դրանում	նրանում	—

³ Դարիս սկզբներին և նույնիսկ ավելի ուշ էլ լայն կիրառություն ունեին մենք, դու, դուք դերանունների գրաբարաձև հայցականները (զմեզ, զքեզ, զձեզ): Մական արդի և փյուռքահայ գրականության ու մամուլի լեզվի, ինչպես նաև մտավոր դասի քանավոր խուսքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ ձևերը, քիչ բացառություններով, դուրս են մղված գրական լեզվից: Հավանաբար այս միտումը նկատի ուներ Հր. Աճառանի՝ դեռ տասնամյակներ առաջ (1945 թ.) արված այն պնդումը, թե նշված դերանունների գրաբարյան զուգաձևերը հնացած են և «կես դար առաջ» միայն գրաբարյան հեղինակների կողմից օգտագործվող (տե՛ս նշվ. աշխ., էջ 80):

⁴ Արևելահայերենի և արևմտահայերենի անվանական հոլովման զուգաբանական քննությունը մանրամասն տե՛ս Մ. Ասատրյան, «Արևելահայերենի և արևմտահայերենի ձևաբանական զուգաբանությունները», «Բանբեր Երևանի համալսարանի», 1989, թիվ 3:

⁵ Խոսակցական լեզվում և փյուռքահայ առանձին հեղինակների գրվածքներում գործածվում են նաև բացառականի ի՞նձ, մե՞նէ, քե՞նէ, ձե՞նէ նեղ բարբառային ձևերը, նույնիսկ՝ իրրև կանոն, ինչպես Ն. Սարաֆյանի պարագային. ի՞նէ քիտղ հոգիս (Երկեր, Ե., 1988, էջ 211), հալածուած ես ի՞նէ (էջ 227), կիլէ ան մե՞նէ (էջ 269), մե՞նէ շատեր (էջ 297) և այլն.

⁶ Հ. Քյուրքճեանի նշված քերականության մեջ ես դերանվան բացառականի և գործիականի ճիշտ ձևեր են նշվում հնչյունափոխված հիմքով կազմությունները՝ ի՞նձմէ, ի՞նձմով, որը, մեր կարծիքով, ճիշտ չի արտահայտում արդի արևմտահայերենում առկա ձևաբանական այդ իրողությունը: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հիշյալ ձևերը անկենսունակ են և հազվադեպ են հանդիպում գրական լեզվում:

արևմտահայերեն

ուղղ.	ես	դուն	մենք	դուք	սա (աս, ասիկա)	դա (ատ, ատիկա)	նա (ան, անիկա)	ով*
սեռ.	իմ	քու	մեր	ձեր	ասոր	ատոր	անոր	որու
տրակ.	իճծի	քեզի	մեզի	ձեզի	—	—	—	—
հայց.	զիս	քեզ	մեզ	ձեզ	—	—	զայն	գոր (որ)
բաց.	իճձմէ	քեզմէ	մեզմէ	ձեզմէ	ասորմէ	ատորմէ	անորմէ	որմէ
գործ.	իճձմով	քեզմով	մեզմով	ձեզմով	ասորմով	ատորմով	անորմով	որմով (որով)
ճերգ.	—	—	—	—	—	—	—	—

Հոլովվող դերանունների երկրորդ խումբը, ինչպես արդեն ասվեց, և՛ արևելահայերենում, և՛ արևմտահայերենում ենթարկվում է անվանական հոլովման, հոլովվում է գոյականի հոլովման սովորական հարացույցով: Հոլովման ու հոլովումների համակարգում և առանձին հոլովների կազմության ու կիրառության մեջ դարձյալ ի հայտ են գալիս որոշ տարբերություններ:

Այս դերանունների հոլովման համակարգը աչքի է ընկնում առանձնահատկություններով, որոնք ընդհանրական են արդի հայերենի, մասնավորապես արևմտահայերենի համար, և որոնք այս կամ այն կերպ արդեն վերը քննարկվեցին: Այն է՝ սեռականը և տրականը ձևաբանորեն տարբերակված չեն, դերանունների մի մասը պահպանել է գրաբարաձև հայցականների կազմությունը, բացակայում է ներգոյական հոլովը: Այսպիսով, անվանական հոլովման ենթարկվող գոյական դերանունների մի մասը գրական արևմտահայերենում ունի չորս, մյուս մասը, որ ամֆաթեմատ քիչ թիվ է կազմում, հինգ հոլովաձև:

Հոլովումների համակարգում անվանական հոլովման ենթարկվող դերանունները էական տարբերություններ չեն դրսևորում: Ինչպես արևելահայերենում, այնպես էլ արևմտահայերենում այդ դերանունների մեծ մասը ենթարկվում է ի հոլովման՝ **իճ-իճի (իճեր-իճերի)**, **ոչ ոք-ոչ ոքի**, **ամեն ինչ-ամեն ինչի**, **մէկ քանից-մէկ քանիցի**, **նոյն-նոյնի**, **ուրտեղ-ուրտեղի**, **ուրիշ-ուրիշի** և այլն. Անվանական ի հոլովման են ենթարկվում նաև **իմ, քու, մեր, ձեր** և այլ սեռականների ձևերը, երբ գործածվում են փոխանվանաբար (փոխանուն սեռական): Դրանք կոչվում են նաև ստացական դերանուններ: Արևմտահայերենից սակայն տարբերվում են որոշ յուրահատկություններով. ստանում են ս, դ դիմորշ հոդեր, երկրորդ դեմքի ձևերը կազմում են **քուկը** բարբառային հիմքով, **հոգնակին** ձևավորում են ու վերջավորությամբ և այլն: Այսպիսով ունենում ենք՝ **իմս-իմիսս-իմիսէս-իմիսովս, քուկը-քուկից-քուկիցէ-քուկիցով, մերիցները-մերիցներու-մերիցներէց-մերիցներով** և այլն:

Ք/ց հոլովման սովորական հարացույցով են հոլովվում **ոմանք, որոնք, ասոնք/սրանք/, ատոնք/դրանք/, անոնք/նրանք/, իրենք/իրքզիք** դերանվան հոգնակին՝ **իրենք զիրենք/դերանունները՝ համապատասխանաբար ունենալով ոմանց, որոնց, ասոնց, ատոնց, անոնց, իրենց/իրենք իրենց/ ձևերը:**

Երբ դերանունը երկու գրականներում էլ ենթարկվում է **վա/ուս/** հոլովման:

Այսուհանդերձ, մեկ հիմնական տարբերություն ունի է արևելահայ գրականում ի հոլովման հարացույցով են հոլովվում **մեկը, ոչ մեկը, ամեն մեկը, ամենքը**, որ դերանունները (**մեկի, ոչ մեկի, ամեն մեկի, ամենքի, որի**), մինչդեռ արևմտահայերենում նույն կամ համարժեք դերանունները ենթարկվում են ու հոլովման՝ **մէկը-մէկու/ն/, ոչ մէկը-ոչ մէկու/ն/, ւսմեն մէկը-ւսմեն մէկու/ն/, ամենը-ամենու/ն/, որ-որու/ն/:**

Վերը շարադրվածը մասամբ պատկերացում տալիս է արևմտահայերենում անվանական հոլովման ենթարկվող դերանունների հոլովական ձևերի մասին՝ սեռական-տրականը կազմվում է ի, ց, վա, ու վերջավորություններով, հայցականում որոշ դերանուններ պահպանում են գրաբարաձև կազմությունները (հաճախ հենց աշխարհաբարյան հոլովաձևերին գուգահեռ)՝ **գոր/որ/, գաճոցք, զիրենք, զիրար/իրար/, գորս/որոնք/** և այլն: Ինչ վերաբերում է բացառական և գործիական հոլովներից, ապա դրանց կազմությունը սկզբունքորեն նույնն է. արևմտահայ գրական լեզվում նույնպես դրանք ձևավորվում են անվանական հոլովման սովորական վերջավորություններով՝ **է, մէ, ով, մով (որոնցմէ-որոնցմով, ասոնցմէ-ասոնցմով, ամենէ/ն/-ամենով, իրարմէ/ն/-իրարմով, նոյնէ/ն/-նոյնով, մէկէ/ն/-մէկով, որմէ-որմով** և այլն), բայց այն տարբերությամբ, որ ուր /ուրտեղ/ դերանվան բացառականը կազմվում է դերանվանական հոլովումից մեզ արդեն ծանոթ կէ վերջավորությամբ՝ **ուրկէ:**

Արևմտահայ գրականում թերված ձևերը որոշ յուրահատկություններ են դրսևորում նաև

* Ինչպես արդեն ասվել է, ով դերանվան ձևերը փոխարինվում են որ դերանվան հոլովված ձևերով:

հողատության և հիմքերի կազմության մեջ՝ հարազատ մնալով ընդհանրապես անվանական հոլովման առանձնահատկություններին, ինչպես, բացառականը, ի տարբերություն արևելահայերենի, կարող է ստանալ և հողը (մէկէն, ոչ մէկէն, ամենէն, մէկ քանիէն, ատոնցմէն և այլն), ոչինչ դերանվան թեքված ձևերը կազմվում են անհնչյունափոխ հիմքով (ոչինչի—ոչինչէ—ոչինչով) ու հակառակը, երբ դերանվան բացառականը կազմվում է տրականի հնչյունափոխ հիմքից՝ երբվրէն, և վերջապես, քանի, մէկ քանի դերանունները հոլովիչից (մակ հողից) առաջ չեն ստանում և (քանիի—քանիէն—քանիով, մէկ քանիի—մէկ քանիէն, մէկ քանիով)։

Ինչ վերաբերում է հոլովող դերանունների կիրառությանը, ապա այդ բնագավառում էլ ընդհանրություններն անհամեմատ ավելի շատ են։ Այսուհանդերձ, որոշ առանձնահատկություններ նշելի են։ Այսպես, արևմտահայերենում սա (հազվադեպ՝ դա, ցա) դերանունը ոչ միայն առարկայական նշանակությամբ է հանդես գալիս՝ նախադասության մեջ կատարելով համապատասխան պաշտոններ, այլև արտահայտում է հատկանշային իմաստ, հանդես գալիս որոշային կիրառությամբ։ Օրինակ՝ Տարիները անհկա պիտի սպառէ ծնունդի սա հակադրութիւնը մեղմելու։ Չէին կրնար սա տղոց պէս երգել, կանչել։ Սա չօճուխին չուր մի տվէք։

Մեկ ուրիշ առանձնահատկություն. արևմտահայ գրականում ստացական հողը և ստադական դերանունը միաժամանակ են գործածվում, մի բան, որ գրական արևելահայերենում անընդունելի է։ Չկա նույնիսկ իմ առաջնորդս։ Կարեւորութիւն իսկ չեն տար իմ ներկայութեանս։ Քու մասիդ կը հարցնեն։ Բայց դուն ալ զիս ուրախացուցիր քու նամակովդ։ Ինչո՞ւ իմ մասիս կը խօսիս ուրիշ ամէն բանէ առաջ։

Երրորդ. Գրական արևմտահայերենում չորս դերանուններով (որոնք ունեն ժխտական իմաստ՝ ոչինչ, ոչ ոք, ոչ մեկը, ոչ մի) կազմված նախադասությունները չեն ունենում ժխտական կառուցվածք, նրանց հետ կապված բայածնը չի ստանում ժխտական չ մասնիկը, և հետևաբար չի ստացվում կրկնակի ժխտում, ինչպես արևելահայերենում է։ Օրինակ՝ Մինչեւ այսօր ոչ ոք կրցած է հասնի անոր աշխարհաբարի գեղեցկութեան։ Ուրեմն ոչ ոք, ոչ մէկ բան կամ ոչ մէկ աշխատանք քննադատութենէ դուրս կը մնայ։

Իբրև առանձնահատկություն պետք է նշել նաև այն, որ արևմտահայ գրական լեզվում ով անձնանիշ դերանունը անձ ցույց տվող գոյականների համաբանությամբ ուղիղ խնդրի պաշտոնում հանդես է գալիս նաև ուղիղ ձևով՝ ի տարբերություն արևելահայերենի թեքված ձևերի, ինչպես՝ Դուն, չես գիտեր թէ քի առաջ ով տեսայ եւ որու հետ գրոյց կ'ընէի։ Ան ով կը սիրէ։

Բացի նշված յուրահատկություններից, գրավոր և բանավոր խոսքում երբեմն հանդիպում են նշված դերանունների՝ արևելահայ գրականից տարբեր այլ կիրառություններ, որոնք, սակայն, արդյունք են համապատասխան քերականական ձևերի ոչ կանոնիկ գործառնության գիտակցման։ Այսպես, երբեմն փորձ է արվում անձնական դերանունների թեքված ձևերը անողդակի խնդրի պաշտոնում գործածել նաև առանց կապերի։ Եվ ի տարբերություն արևելահայերենի դերանուն-կապ՝ իմ մասին, քեզ վրա, քեզ հետ և այլ նման կապակցությունների, արդյունքում ունենում ենք ըստ էության անձիշտ կիրառություններ, ինչպես՝ Կուզեմ որ մտածես զիս, մտածեմ քեզ... Քեզ խօսելէ անդին կ'ուզեմ անցնի։ Պարոն Արտավազդ ինձի չէր բարկացած։ Ինչ կրնամ խօսիլ քեզի։

Այսպիսով, այս համադրական վերլուծությունը մեկ անգամ ևս հավաստում է, որ թեև արևմտահայ և արևելահայ գրական լեզուների միջև առկա տարբերությունները դերանունների հոլովման համակարգում որոշակի են՝ պայմանավորված նախ՝ հիմք բարբառներով և երկրորդ՝ արևմտահայերենի վրա գրաբարի փոքր-ինչ տևական ազդեցությամբ, այսուհանդերձ, առկա լայն ընդհանրությունների կողքին (և անշուշտ ոչ միայն դերանունների համակարգում) դրանք էական դեր չեն կատարում երկու գրականների փոխադարձաբար հասկանալի լինելու ու թերևս միասնական քերականություն մշակելու համար։

Ю. С. АВЕТИСЯН — Надежный супплетивизм в системе местоимений западно- и восточноармянского. — Западноармянский и восточноармянский являются разными проявлениями одного и того же языка. Изучение наблюдаемых в них фонетических, лексических и грамматических совпадений при различии имеет существенное значение для взаимной доступности и понимания, а также для выработки единой грамматики. Статья посвящена одной из сторон соприкосновения этих двух ветвей литературного языка — надежному супплетивизму в системе местоимений, — и как попытка отдельного и цельного анализа первая в нашем языкознании.